Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 04

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռակա արտահերթ նիստի

ք. Երևան 21 ապրիլի 2021թ.

Ղեկավարվելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի ապրիլի 15-ի N 10-Լ որոշմամբ և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, կայացել է՝ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 15-ի N 10-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Բացակայում են՝	
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում Հովհաննես Մարտիրոսյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան հաստատելու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հավանություն տալ Հովհաննես Մարտիրոսյանի թեկնածությանը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար:

Կողմ-6, Դեմ-1

Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան:

Կողմ-6, Դեմ-1

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի նախագահի կողմից Կառավարման խորհրդի անդամներին ներկայացվեց ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի թեկնածու Հովհաննես Մարտիրոսյանին՝ նշելով, որ թեկնածուն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունում խորհրդականի պաշտոն զբաղեցնելու ժամանակ իրեն վերապահված լիազորությունները կատարել է պատշաճ, տիրապետում է ոլորտի առանցքային խնդիրներին, իր պաշտոնավարման ժամանակ, ելնելով իրավապահ համակարգում ունեցած աշխատանքային փորձից, կարողացել է իր առջև դրված խնդիրներին տալ իրավաչափ լուծումներ: Կառավարման խորհրդի նախագահի դիտարկմամբ թեկնածուի՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարման ժամանակ Տեսչական մարմնում առկա խնդիրներին կտրվեն ինստիտուցիոնալ լուծումներ, ինչն ակնառու կլինի շատ կարճ ժամկետում:

Կառավարման խորհրդի անդամների կողմից հարց ուղղվեց թեկնածուին Տեսչական մարմնի նպատակների, խնդիրների մասին իր մոտեցման վերաբերյալ, ինչի վերաբերյալ թեկնածուն հայտնեց իր տեսակետը՝ Տեսչական մարմինը օրենքով սահմանված իր գործառույթներն իրականացնելիս պետք է սերտորեն համագործակցի նաև բոլոր այն գերատեսչությունների և կառույցների հետ, որոնց ներկայացուցիչները Կառավարման խորհրդի անդամ են:

Թեկնածուն հայտնեց նաև, որ Տեսչական մարմնի հիմնական գործառույթն է բնապահպանական վերահսկողության իրականացումը, իրավախախտումների հայտնաբերումը և կանխարգելումը, ինչի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել բոլոր նախապայմանները:
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարը մտահոգություն հայտնեց, որ թեկնածուն մինչ օրս աշխատում է Շրջակա միջավայրի նախարարությունում, իսկ Տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնում նաև Շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել շահերի բախման: Թեկնածուն հավաստիացրեց, որ շահերի բախում չի կարող լինել, քանի որ իր պաշտոնավարման ժամանակահատվածում ինքն առաջնորդվելու է բացառապես օրենքներով և իր լիազորություններն իրականացնելու է պատշաճ կերպով:
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի կողմից հայտնած մտահոգության վերաբերյալ Խորհդի նախագահը ներկայացրեց իր դիտարկումը՝ Տեսչական մարմնի ուժեղացումը և ինստիտուցիոնալ խնդիրների լուծումը բխում է առաջին հերթին՝ Շրջակա միջավայրի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների շահերից:
ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարը նաև արձանագրեց, որ Կառավարման խորհրդի լայն լիազորությունները կզսպեն շահերի բախումը:
Ելնելով վերոգրյալից, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը և ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանը՝ հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի այլ թեկնածու չկա, կողմ են քվեարկում վերապահումով՝ ակնկալելով, որ պաշտոնավարման առաջին եռամսյակի ավարտին Տեսչական մարմինը ցուցաբերած կլինի բարձր արդյունքներ:
ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը օրակարգի առաջին հարցին քվերարկել է ԴԵՄ՝ ներկայացնելով իր դիտարկումը՝ գտնում եմ, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար պաշտոնում պետք է նշանակվի մարդ, ով մասնագիտական առումով սկսել է ամենաստորին պաշտոնից, տիրապետում է ոլորտի նեղ մասնագիտական նպատակներին և խնդիրներին, իրականացրել է վարչարարություն տվյալ ոլորտում և տիրապետում է վարչարարության հիմունքներին:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Պերճ Խաչատրյանը օրակարգի երկրորդ հարցին քվերարկել է ԴԵՄ՝ ներկայացնելով իր դիտարկումը՝ գտնում եմ, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդոլոգիան պետք է հաստատվի անհրաժեշտ շտկումներից հետո, քանի որ հետագայում ևս կարող է առաջանալ փոփոխությունների անհրաժեշտություն:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____Հ. Բարսեղյան